4. ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՂԻՆԵՐ

§4.1. ՀԱՄԱՑԱՆՑ

Ժամանակակից աշխարհը դժվար է պատկերացնել առանց ինֆորմացիայի փոխանցման այնպիսի գերհզոր միջոցի, ինչպիսին *Համացանցն* է (*Ինտերնետ*): Ոմանց համար այն ինքնազարգացման աղբյուր է, այլոց համար զվարճանքի միջոց, մի մասի համար էլ՝ վաստակի աղբյուր: Համացանցը հնարավորություն է տալիս վայրկյանների ընթացքում ինֆորմացիան հասցնել երկրագնդի ցանկացած կետ: Սակայն սխալ կլիներ այն միայն որպես ինֆորմացիայի փոխանցման միջոց դիտել, քանի որ Համացանցը նախ և առաջ բազմատեսակ ինֆորմացիայի կուտակման ու պահպանման հզոր պահեստ է, որտեղ կարելի է ցանկացած բնագավառի վերաբերյալ տեղեկատվություն գտնել:

Եթե փորձենք Համացանցում ներառված համակարգիչների միջև առկա կապի գծերը պատկերացնել, ապա այն նման կլինի սարդոստայնի: Այստեղից էլ առաջացել է *Համաշխարհային սարդոստայն* (*World Wide Web* կամ *WWW*) անվանումը:

> *Համաշխարհային սարդոստայնը* **համակարգ է, որը հնարավորություն է տալիս օգտվել Համացանցին միացված համակարգիչներում պահպանվող էլեկտրոնային փաստաթղթերից:**

Համացանցում պահպանվող և շրջանառվող էլեկտրոնային փաստաթղթերը կարող են պարունակել տեքստեր, էլեկտրոնային աղյուսակներ, գրաֆիկական պատկերներ, տեսահոլովակներ և այլն:

Հաճախ էլեկտրոնային փաստաթղթերում որոշակի լուսանկարներ, տերմիններ, անվանումներ, հիմնական տեքստից տարբերվող ընդգծված բառեր կամ այլ բաղադրիչներ են ընդգրկված լինում, որոնց շրջակայքում մկնիկի կուրսորը ձեռքի (👆) տեսք է ստանում: Էլեկտրոնային փաստաթղթերում առկա նման հատվածներն անվանում են *հիպերհղումներ*: Յուրաքանչյուր հիպերհղում ընտրելիս էկրանին դրան համապատասխանող էլեկտրոնային որոշակի ինֆորմացիա է արտածվում:

Հիպերհղումներ պարունակող էլեկտրոնային փաստաթղթերն անվանում են *հիպերտեքստային փաստաթղթեր*:

Հիպերտեքստային էլեկտրոնային փաստաթղթեր ստեղծելու համար հատուկ միջոցներ կան, որոնցից լայնորեն կիրառվում է *HTML*-ը՝ *հիպերտեքստային նշագրման լեզուն*: Այս լեզվի օգնությամբ հետագայում կսովորենք *WEB-էջեր* ստեղծել:

Հիպերտեքստային կազմությամբ փաստաթղթերը կոչվում են *WEB-էջեր*, **իսկ իրար հետ հիպերհղումներով փոխկապակցված** *WEB- էջերի* **միասնությունը՝** *կայք* (*site*):

WEB-էջը կարող է ցանկացած երկարություն ունենալ և շատ հաճախ դրա մի մասը էկրանին չի տեղավորվում. նման դեպքերում օգտվում են էկրանին առաջացած անցավազքի գոտիներից:

Ցանկացած կայք իր հերթին կարող է այլ կայքերին ուղղված հիպերհղումներ պարունակել: Նման հիպերհղում ընտրելիս բացվում է հաջորդ համապատասխան կայքը: *Կայքը կարող է ցանկացած քանակությամբ WEB-էջեր պարունակել* և նույնիսկ այնպիսիք, որոնք իրար հետ կապ չունեն: Կայքում ընդգրկված էջերից մեկը համարվում է, այսպես կոչված, *վերնագրային էջ*. կայք փնտրելիս դիմում են հենց այդ էջին: Վերնագրային էջը հիմնական պատկերացում է տալիս կայքում եղած էջերի բովանդակության վերաբերյալ:

Օգտակար է իմանալ

- *WEB-էջը* բեռնավորելիս առաջին հիպերհղումն ավտոմատ ընդգծվում է: Դրան հաջորդող հիպերհղումներին կարելի է անցնել նաև *Tab* ստեղնի միջոցով:
- Ընթացիկ հիպերհղումից նախորդող հիպերհղումներին կարելի է անդրադառնալ *Shift* և *Tab* ստեղների համատեղ սեղմումով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է Համացանցը:
2. Ինչ է հիպերհղումը:
3. Թվարկեք էլեկտրոնային փաստաթղթի ձեզ հայտնի այն բաղադրիչները, որոնք կարող են հիպերհղումներ հանդիսանալ: